## ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ ՍՏԱԼԻՆԳՐԱԴԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ

Ժ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

1942 թ. հուլիսին, երբ գերմանական հարվածային խմբավորումները Դոնի մեծ ոլորանում ճեղքեցին սովետական զորքերի պաշտպանությունը, սկսվեց Ստալինգրադի ճակատամարտը։ Վոլգայի ափերը դուրս գալու համար ֆաշիստական հրամանատարությունը կանգ չէր առնում ո՛չ մարդկային զոհերի և ո՛չ էլ տեխնիկայի կորուստների առջև։

Ինչպես Հայրենական մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում, այնպես էլ Ստալինգրադի հերոսամարտում հայ ժողովրդի զավակները փառքով պսակեցին իրենց։

1942 թ. ամռանը, թշնամու գերակշռող ուժերի ճնշման տակ, դեպի հարավ նահանջող մեր զորամասերի մեջ էին նաև 76-րդ, 15-րդ գվարդիական և 138-րդ հրաձգային դիվիզիաները, որոնք պաշտպանական դիրքեր գրավեցին Ստալինգրադի մատույցներում։ 76-րդ և 138-րդ դիվիզիաները հետագայում մարտնչեցին նաև բուն քաղաքում։

Դոնի և Վոլգայի ափերին մղված մարտերի սկզբում 76-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար է նշանակվում Նիկոլոզ Թավարթքիլաձեն։ «Ընդունելով այդ դիվիզիան,— գրում է նա,— ես հիշում էի, որ դարեր շարունակ վրացիները և հայերը միասին, ուս-ուսի տված, պայքարել են մեր երկիրը ներխուժած թշնամիների դեմ։ Չէ՞ որ կովկասյան ժողովուրդների եղբայրությունն ամրապնդվել է արյամբ։ Մեր նախնիների այդ ավանդույթները շատ բան էին պարտավորեցնում։ Մենք անվախ սկսեցինք գործել, որով արդարացրինք հայրենիքի հույսը»[1]։

Մարտերի յուրաքանչյուր օրը նոր սխրանքներ էր ծնում։ Միայն օգոստոսի 7—8-ը 93-րդ՝ «Լոռու» գնդի մարտիկները ոչնչացնում են թշնամու երեք զընդացիր, բազմաթիվ դոտեր ու դզոտներ և մոտ 70 հիտլերական։ Այդ մարտերում իրեն գերազանց է դրսևորում հետախուզական ջոկի հրամանատար Մինաս Ռոդոնյանը[2]։ Դիվիզիայի «Վորոշիլովեց» թերթի 1942 թ. սեպտեմբերի 19-ի համարում գրվեց Մինասի սխրանքների մասին։ Սակայն նրա վերջին մարտը տեղի ունեցավ սեպտեմբերի 17-ին. Կլետսկայա կայարանի շրջանում հետախուզություն կատարելիս Ռոդոնյանը հայտնաբերում է թշնամու երկու դիտակետ և երեք գնդացրային կետ, որոնց ոչնչացմամբ մեր հետևակին առաջ շարժվելու հնարավորություն է ընձեռվում։ Մարտնչելով հետևակի դեմ, Ռոդոնյանը ոչնչացնում է 10 հիտլերական, սակայն ինքն էլ հերոսաբար զոհվում է այդ մարտում և ետմահու պարգևատրվում Կարմիր դրոշի շքանշանով[3]։

---

1 Ն. Թավարթքիլաձե, Եղել են այսպիսի օրեր, Երևան, 1965, էջ 12։

2 ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության արխիվ (այսուհետև ՍՍՀՄ ՊՄԱ), 51-րդ գվարդիական (76-րդ) հրաձգային դիվիզիայի ֆոնդ, ց. 1, գ. 225, թ. 239։

3 Նույն տեղում, ց. 2, գ. 97, թ. 113։

Գնդի սերժանտ Դավթյանը միայն մեկ մարտի ժամանակ հարձակվող գերմանացիների շարքերի մեջ նետեց 14 նռնակ և ետ շպրտեց թշնամու երկու գրոհ։ Նրա ջոկն այդ մենամարտում ոչնչացրեց 47 հիտլերական[4]։ 93-րդ գնդի քաջարի հրամանատարներից էր լեյտենանտ Թորոս Այվազյանը։ Մարտերից մեկի ժամանակ թշնամու 4 տանկ սլանում են դեպի շորս հրետանավորների դիրքերը։ Տանկերից մեկը պտույտներ է գործում Թ. Այվազյանի խրամատի վրա։ Այվազյանը վերցնում է հակատանկային նռնակը և պատրաստվում ոչընչանալ տանկի հետ, որը փորձում է առաջ անցնել, բայց Այվազյանի նռնակը կանգնեցնում է զրահապատ հրեշին։ Դուրս ցատկող երկու հիտլերականները տեղն ու տեղը սպանվում են հայրդու կրակից, երկրորդ տանկը անշարժանում է հրանոթի արկից, երրորդը՝ հրկիզվում է ավագ լեյտենանտ Վոլոդինի դիմահար կրակով՝ հենց Այվազյանի խրամատի վրա։ Տանկերի գրոհին հաջորդում է հիտլերականների հետևակը։ Այվազյանը և Գորելովը գնդացրային կրակով են դիմավորում դեպի բարձունքը ձգտող թշնամուն։ Երկու ժամ տևած մենամարտում սովետական ռազմիկները հաղթող են դուրս գալիս։ «Նշանակում է մենք վատ չկռվեցինք»—գրում է Թ. Այվազյանը[5]։ Կլետսկի շրջանի Կարժինսկի ավանի մոտ, նոյեմբերի 15-ին, մարտական առաջադրանքը կատարելիս, լեյտենանտ Այվազյանը զոհվում է։ Նա ետմահու պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով[6]։

207-րդ հրաձգային գնդի հետախուզական դասակի հրամանատար Երվանդ Մանվելյանը և սերժանտ Ադոսանովը մինչև 1942 թ. սեպտեմբերի 9-ը գերեցին գերմանական 50 զինվոր և սպա[7]։

207-րդ գնդի գումարտակներից մեկին առաջադրանք էր տրվել անցնել Դոնը և ոչնչացնել գետափին դիրքավորված թշնամու խմբավորումը։ Հրետանային նախապատրաստությունից հետո, դեռ լույսը չբացված, սովետական զինվորները հարձակվում են խրամատավորված հիտլերականների վրա և խուճապի մատնում նրանց։ Մարտի նետելով պահեստային ուժեր, գերմանացիները 400 հոգով անցնում են հարձակման։ Դիվիզիայի հրամանատարությունը հակագրոհի կազմակերպումը հանձնարարում է գնդի հրամանատարի տեղակալ, մայոր Սերոբ Գրիգորյանին։ Նա վայրկյան կերպով է կատարում առաջադրանքը։ Գերմանացիները մեծ կորուստներ կրելով նահանջում են։ «Հրամանատար Գրիգորյանի կողմից կրակային միջոցների խելացի կազմակերպումը, մարտի ճշտորոշ և անսխալ ղեկավարումն օգնեց ստորաբաժանմանը հրամանատարության առաջադրանքը կատարելու և խուսափելու անտեղի զոհերից»[8]։

Այդ օրերին իրեն հատկապես լավ դրսևորեց գնդի հրամանատար Սամվել Բարսեղյանը։ Մարտերից մեկի ժամանակ նա նկատում է, որ թշնամու ավտոմատավորների մի վաշտ օղակում է գնդի հրետանային մարտկոցը։ Հապաղումը ողբերգական կարող էր լինել. Բարսեղյանը որոշում է անձամբ հասնել մարտկոցին և ոչնչացնել թշնամուն։ Ձիով սուրացող հրամանատարի վրա գերմա-

---

4 «Ворошиловец», 27. II. 1942.

5 «Коммунист», 13. II. 1943.

6 ՍՍՀՄ ՊՄԱ, 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի ֆոնդ, ց. 1, գ. 38, թ. 106, դ. 102, թ. 5։

7 Նույն տեղում, դ. 225, թ. 229։

8 «Ворошиловец», 21. II. 1942.

նացիները հրետանային կրակ են բացում, սակայն Բարսեղյանը հասնում է մարտկոցին և յուրայինների հետ ոչնչացնում հիտլերականներին[9]։

136-րդ հրաձգային դիվիզիան 1942 թ. փետրվարին արժանացավ գվարդիականի կոչման և վերանվանվեց 15-րդ գվարդիական հրաձգային դիվիզիա։ 1942 թ. հուլիսի 27-ից դիվիզիան դիրքավորվեց Ստալինգրադից հարավ՝ Դուբովի Օվրաղ, Պրիվոլժսկ, Ռայգորոդ սահմանագծում։ Արյունահեղ մարտեր եղան հատկապես օգոստոսի 20—23-ին, երբ թշնամին գերակշռող ուժերով Պրիվոլժսկի սովխոզի և Դուբովի Օվրաղի շրջանում հարձակվեց դիվիզիայի պաշտպանական դիրքերի վրա Ստալինգրադ դուրս գալու համար։

Այդ մարտերում թշնամուն ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս դիվիզիայի 44-րդ, 50-րդ հրաձգային, 43-րդ հրետանային գնդերը և 27-րդ առանձին ականանետային դիվիզիոնը։ Օգոստոսի 20-ին 44-րդ գնդի վրա գրոհելիս թշնամին կորցնում է 13 տանկ, 5 ավտոմեքենա, 2 հրանոթ, 55 զինվոր ու սպա, 43-րդ հրետանային գունդը ոչնչացնում է 15 տանկ, 20 ավտոմեքենա[10]։

43-րդ գվարդիական հրետանային գնդի երկրորդ մարտկոցի հրամանատարի տեղակալն էր խաչատուր Գևորգյանը, որը 1942 թ. օգոստոսի 21-ի մարտում իրեն հերոսաբար դրսևորեց։ Թշնամու տանկերի հարձակման ժամանակ, փոխարինելով վիրավորված նշանառուին, նա ոչնչացնում է թշնամու 4 տանկ և երեք ավտոմեքենա։ Այդ պահին կրակագծում ռմբակոծությունից հրդեհվում է արկերով լցված ավտոմեքենան։ Կյանքը վտանգելով՝ Գևորգյանը հանգցնում է հրդեհը, վերցնում արկերը և ապահովում մարտկոցի անխափան կրակը[11]։ Նույն օրը Պրիվոլժսկի սովխոզի շրջանում պաշտպանություն գրաված 44-րդ գվարդիական գնդի հրետանային վաշտի կուսքարտուղար Նավասարդ Միրոյանը հրկիզում է թշնամու 4 տանկ և վերջին պահին զինվելով երկու նռնակով, իրեն նետում է 5-րդ տանկի թրթուրների տակ[12]։ «...Հայրենիքի ազատությունը պետք է պաշտպանել,— ասել է նա իր նամակներից մեկում,— գուցե հայրենիքի համար զոհ գնամ, բայց դարձյալ լավ է պատվով մեռնել, քան թե անոթատիվ ողջ մնալ»[13]։

Դուբովի Օվրաղի շրջանում գեներալ Կլեյստի 48-րդ տանկային կորպուսի դեմ մարտեր էր մղում նաև 27-րդ առանձին ականանետային դիվիզիոնը, որի հրամանատարն էր մայոր Սամվել Հարությունյանը։

138-րդ հրաձգային դիվիզիան արյունահեղ մարտեր մղեց Ստալինգրադի մատույցներում և քաղաքում։ Թշնամին շարունակում էր նոր համալրումներ նետել դիվիզիայի դեմ։ Հուլիսի վերջերից սկսած՝ ամեն օր թշնամին 10—12 ինքնաթիռով ռմբակոծում էր ղորամասի մարտակարգերը և 5—10 անգամ գրոհ կազմակերպում։ Բայց, սովետական մարտիկները հերոսաբար էին մարտնչում։ Միայն հուլիսի 31-ին թշնամին մարտադաշտում թողեց 1000 սպանված և 2000 վիրավոր[14]։ Դիվիզիայի ամբողջ անձնակազմի հետ արիություն և խիզախություն ցուցաբերեցին նաև հայ ռազմիկները։

---

9 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվ (այսուհետև ՀՍՍՀ ԳԱ ՀՊՊԿԱ), ֆ. 2, գ. 9, թ. 8—9։

10 ՍՍՀՄ ՊՄԱ, 15-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի ֆոնդ, ց. 104841, գ. 1, թ. 101։

11 «На защиту Родины», 25. VIII. 1942.

12 «Բանվոր», 2. II. 1963։

13 «Սովետական Հայաստան», 21. II. 1968։

14 ՍՍՀՄ ՊՄԱ, 70-րդ գվարդիական (138-րդ) հրաձգային դիվիզիայի ֆոնդ, ց. 1, գ. 1, թ. 6։

Կոստյա Վարդևանյանը 295-րդ հրետանային գնդի 3-րդ մարտկոցի հրամանատարն էր։ 1942 թ. օգոստոսի 1-ին նա Կրասնի Յարի շրջանում ոչնչացրեց թշնամու մի քանի կրակակետ և ետ մղեց ռումինացիների երկու գրոհը[15]։ Օգոստոսի 6-ին Գեներալովսկի շրջանում Վարդևանյանը փոխարինելով շարքից դուրս եկած նշանառուին՝ կանգնեցրեց գերմանացիների առաջխաղացումը։ Այդ օրը նա ոչնչացրեց թշնամու մոտ մեկ գումարտակ զինվոր և սպա[16], իսկ օգոստոսի 31-ի մարտում՝ իր ընկերների հետ շարքից հանեց 40 տանկ և 10 ավտոմեքենա։ Այդ մարտում Կոստյան ոչնչացնում է թշնամու 6 տանկ և հերոսաբար ընկնում արկի բեկորից[17]։ Կոստյա Վարդևանյանը դիվիզիայում առաջինն արժանացավ Լենինի շքանշանի։

1942 թ. նոյեմբերի սկզբներին 138-րդ դիվիզիան, Վոլգային սեղմված, ընկավ կիսաշրջապատման մեջ։ Նրա գնդերում հաշվվում էր 70—100-ական մարդ։ Միայն նոյեմբերի 11-ին մարտիկները ետ մղեցին թշնամու 6 գրոհ։ Նոյեմբերի 13-ի լուսաբացին 1500 ֆաշիստական զինվորներ և սպաներ անցնում են հարձակման։ Դիվիզիայի զորամասերին սպառնում էր շրջապատման վտանգը։ Թշնամուն ետ մղելու համար դիվիզիայի ամբողջ ուժերը նետվում են նրա դեմ, կռվում են նույնիսկ գնդերի և դիվիզիայի շտաբների աշխատակիցները։ Մարտը տևում է 11 ժամ։ Սի պահ հակառակորդի 70 ավտոմատավորներ ներխուժում են դիվիզիայի դասավորության շրջանը և սպառնում նույնիսկ հրամանատարական կետին։ Բայց այդ բոպեներին 18—20 հոգուց բաղկացած մի խումբ քաջեր սվինամարտի են բռնվում թշնամու հետ և հաղթում[18]։ Նրանց թվում էր դիվիզիայի հատուկ բաժնի ավագ լիազոր Աշոտ Բարսեղյանը, որը ոչնչացրեց 13 գերմանացի և իր օրինակով ոգևորեց մարտիկներին[19]։ Հակառակորդը նկատելով գնդի կարճատև խուճապը, փորձում է տանկերով և հետևակով օղակել ու ոչնչացնել հրամանատարությունը կորցրած զորամասին։ Ստանձնելով գնդի հրամանատարությունը, Աշոտ Բարսեղյանը համարձակորեն առաջ է նետվում և իր հետևից գրոհի տանում գոտեպնդված մարտիկներին։ Թշնամին դուրս է շպրտվում կարևոր բնագծից։ Այդ մարտում հակառակորդը կորցնում է 700 զինվոր և սպա[20]։

Ստալինգրադի պաշտպանական մարտերում հայ ռազմիկները աչքի ընկան նաև ուրիշ զորամիավորումներում։

Լեգենդար հրամանատարի անուն վաստակեց 14-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 36-րդ գնդի հրամանատար Մաթևոս Մադաթյանը։ Նրա գունդը թշնամու դեմ պայքարելիս ցուցաբերեց «մարտեր վարելու, կրակը և շարժումը միակցելու հմտություն, ինչպես նաև անձնական խիզախություն և արիություն»[21]։ Միայն Ջուրատովկա գյուղում Մադաթյանի գունդը գերի վերցրեց թշնամու 1000 զինվոր և սպա[22]։ 1942 թ. օգոստոսյան մարտերից մեկում

---

15 Վոլգոգրադի պաշտպանության արխիվ, թղթ. 389, գ. 1, թ. 46։

16 ՍՍՀՄ ՊՄԱ, 70-րդ գվարդիական (138-րդ) հրաձգային դիվիզիայի ֆոնդ, ց. 1, գ. 3, թ. 18։

17 Նույն տեղում, թ. 15 և 20։

18 Նույն տեղում, գ. 1, թ. 12։

19 Նույն տեղում, ֆ. 345, ց. 5502, գ. 68 (2-րդ հատոր), թ. 58։

20 ՀՍՍՀ ԳԱ ՀՊՊԿԱ, ֆ. 5, գ. 228, թ. 8։

21 «Боевой товарищ», 28. VIII. 1942.

22 ՀՍՍՀ ԳԱ ՀՊՊԿԱ, ֆ. 184, գ. 3, թ. 5։

ղնդի ռազմիկները խփեցին և հրկիզեցին թշնամու 52 տանկ։ Ցուցաբերած հերոսության համար Մագաթյանը պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Ստալինգրադի հերոսական պաշտպանության օրերին իրեն փառքով պսակեց «Պավլովի տան» քաղաքակ Վաշե Ավակիմովը։ Նա ամենից հաճախ էր լինում այդ տանը, կայազորի անգամների հետ մարտնչում էր թշնամու դեմ. կազմակերպում դրույցներ, տեղեկություններ հաղորդում մյուս ռազմաճակատներից։ Հոկտեմբերյան հեղափոխության 25-րդ տարեդարձի նախօրյակին Ստալինգրադի ռազմաճակատի պաշտպանները մարտիկից մինչև գեներալը քաղաքը պաշտպանելու սրբազան երդում ընդունեցին։ «Պավլովի տան» կայազորից երդում ընդունեց Վ. Ավակիմովը։

1942 թ. նոյեմբերի 25-ին, 58-օրյա պաշտպանությունից հետո, հարձակման է անցնում նաև «Պավլովի տան» կայազորը, որի ռազմիկների թիվը հարյուրի էր հասցվել։ Վ. Ավակիմովը վաշտի հրամանատար կապիտան Նաումովի հետ միասին կազմակերպում և ղեկավարում է գրոհը։ Հարձակման հենց առաջին պահին Նաումովը դո՞վում է։ Գրոհը ղեկավարում է Ավակիմովը։ Կայազորը գրավում է «մոլոչնի» կոչվող շենքը, ետ մղում թշնամու վեց հակագրոհ։ Հիտլերականները կորցնելով 150 սպանված. նահանջում են։ Այնուհետև Վ. Ավակիմովը նշանակվում է 3-րդ գնդացրային վաշտի հրամանատար։ Մամաև Կուրգանի հյուսիսային լանջերում, թշնամու շրջապատված խմբավորումը երկու մասի բաժանող դորամասերի հանդիպման մասնակիցներից էր նաև Վ. Ավակիմովի վաշտը։ Վ. Ավակիմովի կյանքի թելը կտրվեց 1943 թ. հոկտեմբերի 3-ին, Դնեպրի անցման ժամանակ։

1942 թ. նոյեմբերի 19-ին Ստալինգրադում սովետական զորքերն անցան վճռական հարձակման։ Թշնամու 330 հազարանոց խմբավորումը շրջապատվեց։ Սովետական բանակը հուժկու հարվածներով օր-օրի նեղացնում էր շրջապատման օղակը։ «Զորամասերում երբեք այնպիսի քաղաքական ու բարոյական վերելք չի եղել, ինչպես այդ օրերին»[23],— գրում է Դոնի ռազմաճակատի քաղվարչության պետ Սերգեյ Գալաջևը։ Հայազգի գեներալ Ս. Գալաջևը անցել էր Խալխին Գոլի, ֆիննական կռիվների բովով և կուտակել ռազմական հարուստ փորձ։

Ս. Գալաջևը մեծ դեր խաղաց ամբողջ հերոսամարտում։ Ռազմաճակատի հրամանատար Կ. Ռոկոսսովսկու հետ միասին Գալաջևը ղեկավարեց ռազմական գործողությունները։ Նա հաճախ էր լինում առաջավոր գծում, ելույթներ ունենում և ոգեշնչում մարտիկներին։

Կարմիր բանակի հրետանու շտաբի պետի տեղակալ, գեներալ-մայոր հայազգի Իվան Վեքիլովը Ստալինգրադում՝ գլխավոր շտաբի ներկայացուցիչ, հրետանու մարշալ Ն. Վ. Վորոնովի հետ հրետանին նախապատրաստեց նոյեմբերյան մեծ հարձակմանը։ «Նոյեմբերյան հարձակման ժամանակ,— գրում է Ն. Վ. Վորոնովը,— ինձ հետ միասին հրետանին ակտիվորեն նախապատրաստել է Իվան Վեքիլովը»[24]։ Մարշալ Վորոնովը Վեքիլովին բնութագրում է որպես «հիանալի պատրաստված հրետանավորի, որը կատարելապես ծանոթ է արդի մարտին և հրետանու մարտական կիրառմանը»[25]։

---

23 «Красная звезда», 10. I. 1943.

24 Н. В. Воронов, На службе военной, М., 1963, стр. 291.

25 ՀՍՍՀ ԳԱ ՀՊՊԿԱ, ֆ. 15, գ. 3, թ. 29։

Վ. Վոլսկու 4-րդ մեքենայացված կորպուսը ռազմական գործողությունները սկսեց 1942 թ. նոյեմբերյան հարձակման օրերին։ Գործելով Ստալինգրադի ռազմաճակատի հարվածային խմբավորման ձախ թևում, կորպուսն առաջինը դուրս եկավ թշնամու դասավորության խորքը և միանալով Հարավ-արևմտյան ռազմաճակատի 4-րդ տանկային կորպուսին, Կալաչ քաղաքի շրջանում՝ 1942 թ. նոյեմբերի 23-ին շրջափակեց գերմանա-ֆաշիստական խմբավորմանը։ Այդ մարտերում խոշոր դեր խաղաց կորպուսի 60-րդ մեքենայացված բրիգադը, որի հրամանատարն էր փոխգնդապետ Ասքանազ Կարապետյանը։ Բրիգադը նոյեմբերի 20-ին մարտերով դուրս եկավ Պլոդովիտոյի շրջանը, շեշտակի հարվածով գրավեց Տինդուտա կայարանը, ճանապարհ հարթելով թշնամուն աքցանի մեջ վերցնող սովետական զորամասերի համար։ Բրիգադը մեծ արիություն ցուցաբերեց Լյապիչևի, Լոգովսկու համար մղված մարտերում, որոնց ընթացքում գրավեց 10 տանկ, 100 ավտոմեքենա, 50 մոտոցիկլ, 20 հրանոթ, և գերի վերցրեց 1000 մարդ[26]։ Լյապիչև քաղաքի համար մղվող մարտերում բրիգադը աղատագրեց սովետական ավելի քան 2000 զինվոր[27]։ Ստալինգրադյան հաղթանակից հետո, Դոնբասի աղատագրման մարտերում ցուցաբերած արիության և խիզախության համար Ա. Կարապետյանն արժանացավ Սովետական Միության հերոսի կոչման, իսկ հետագայում՝ զեներալ-մայորի զինվորական աստիճանի։

Հարավ-արևմտյան ռազմաճակատի 5-րդ տանկային բանակի ռազմական խորհրդի անդամն էր Հայկ Թումանյանը, որը պատերազմի առաջին օրերին պարտիզանական խմբավորումներ էր կազմակերպել օկուպացված տերիտորիաներում։ Այդ փորձը նա ձեռք էր բերել Իսպանիայում, խռովարարների դեմ մարտնչելու ժամանակ։ Թշնամու ստալինգրադյան խմբավորման շրջապատման և ջախջախման օրերին, 5-րդ տանկային բանակին տրված էր ամենավճռական դերը։ Բանակը իր ուժեղացված զորամասերով պետք է թշնամուն ընդլխավոր հարված հասցներ Պերելազովսկիի ուղղությամբ, որից հետո, 21-րդ բանակի զորամասերի հետ համագործակցած, ոչնչացներ ռումինական 3-րդ բանակի հիմնական ուժերը[28]։ Բանակը պատվով կատարեց հրամանատարության առաջադրանքը։ Բանակի հրամանատար Պ. Ռոմանենկոյի հետ Հ. Թումանյանն իր ավանդը ներդրեց թշնամու ջախջախման գործում։

133-րդ տանկային բրիգադը, որի կոմիսարն էր Գրիգոր Կալուստովը, Ստալինգրադի մատույցներում ոչնչացրեց թշնամու 218 տանկ, և արժանացավ գվարդիականի կոչման[29]։ Գվարդիականի կոչման արժանացավ նաև գլխավոր հրամանատարության պահեստային 114-րդ ականանետային գունդը, որի հրամանատարն էր մայոր Գևորգ Միրզոյանը։ Միայն մեկ մարտում 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի սերժանտ Արգամ Հակոբյանը խփեց թշնամու չորս տանկ[30], տանկիստ Սարգիս Սաղաթելյանը՝ 6 տանկ, 9 ավտոմեքենա, 7 հրանոթ և ոչնչացրեց մոտ 300 հիտլերական[31]։ Մարտերից մեկում

---

26 ՍՍՀՄ ՊՄԱ, ֆ. 33, ց. 682525, գ. 12, թ. 236։

27 Մ. Մարտիկյան, Գեներալ-մայոր Ասքանազ Կարապետյան, Երևան, 1946, էջ 62։

28 Великая победа на Волге, М., 1965, стр. 229—230.

29 ՍՍՀՄ ՊՄԱ, ֆ. 33, ց. 682524, գ. 1009, թ. 98։

30 ՍՍՀՄ ՊՄԱ, 51-րդ գվարդիական (76-րդ) հրաձգային դիվիզիայի ֆոնդ, ց. 1, գ. 226, թ. 101։

31 ՀՍՍՀ ԳԱ ՀՊՊԿԱ, ֆ. 262, գ. 2, թ. 19։

սանկիստ Բենիամին Մինասյանը ոչնչացրեց 10 ավտոմեքենա, 10 հրանոթ, 300 հիտլերական[32] և այլն։

Թշնամուն ջախջախելու գործում աչքի ընկած բազմաթիվ քաջ հայորդիներից են 51-րդ բանակի քաղվարչության կոմերիտմիության հրահանգիչ Լևոն Պետրոսյանը, 15-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 44-րդ գնդի կուրյուրոյի քարտուղար Իվան Թայիրյանը, 29-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի քաղդծով տեղակալ Գևորգ Խաչատրյանը, 38-րդ հրաձգային դիվիզիայից՝ Անդրանիկ Խաչատրյանը, 58-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայից՝ Մակիչ Բալյանը, 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայից՝ Արամ Մամունցը, Արտեմ Քոչարյանը, 214-րդ հրաձգային դիվիզիայից՝ Մինաս Մռավյանը, Հայրապետ Սահրադյանը և շատերը։

Հերոսամարտի ընթացքում իրեն փառքով պսակեց հայ օդաչուների համատեղությունը։ Նրանցից՝ Սերգեյ Բուռնազյանը, որը հետմահու արժանացավ Սովետական Միության հերոսի կոչման, ստալինգրադյան օրերին ոչնչացրեց թշնամու 14 ինքնաթիռ[33], իսկ հայաղգի փառաբանված օդաչու Նիկոլայ Գորևը՝ գերմանական 12 ինքնաթիռ[34]։ Իրենց քաջաբար դրսևորեցին նաև օդաչուներ՝ Վլադիմիր և Ստեփան Միկոյանները, Նիկոլայ Սարդսյանը, Սարգիս Ծաղիկյանը, Խաչատուր Պետրոսյանը և շատ ուրիշներ։

Վոլգայի ափերին մարտնչող հայ ժողովրդի զավակները սրբությամբ կատարեցին իրենց պարտքը սոցիալիստական հայրենիքի նկատմամբ։ Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ թև-թևի տված՝ նրանք կրծքով պատնեշեցին Վոլգայի ամրոցը և փառապանծ էջ գրեցին մեր հայրենիքի ազատության և անկախության համար մղված հերոսական պայքարի տարեգրության մեջ։

## СЫНОВЬЯ АРМЯНСКОГО НАРОДА В СТАЛИНГРАДСКОЙ ЭПОПЕЕ

Ж. А. ГРИГОРЯН

**Резюме**

В величайшей Сталинградской битве участвовали сыновья всех народов Советского Союза, в том числе сыновья армянского народа.

Направленные из Армении на фронт 76, 136 и 138-ые (в дальнейшем и 51, 15, 70-ые гвардейские) стрелковые дивизии, которые в начале войны были укомплектованы людскими и материальными ресурсами республики, приняли активное участие в битве на берегах Волги и Дона. Во всех войсковых соединениях, участвовавших в Сталинградской битве, было немало армян. Сыновья армянского народа от рядового до генерала, вместе с сыновьями братских народов нашей страны, вели самоотверженную борьбу против немецко-фашистских захватчиков и вписали немеркнущие страницы в летопись Сталинградской битвы.

---

32 «Боевой товарищ», 2. I. 1943.

33 ՀՍՍՀ ԳԱ ՀՊՊԿԱ, Ս. Բուռնազյանի գործ, թղթ. 1, գ. 1, թ. 1։

34 Վոլգոգրադի պաշտպանության արխիվ, թղթ. 245, փաստաթուղթ 4848։